

Հաստատում եմ՝

ԱՐՏԵՄ ՄԻԿՈՑԱՆԻ ԱՆՎԱՆ

N 166 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ

Տնօրեն՝----- Ս. Պ. Քուշկյան

<----->> 2023թ.

ԱՐՏԵՄ ՄԻԿՈՑԱՆԻ ԱՆՎԱՆ N 166

ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ

դասարանի ղեկավարի աշխատանքային

տարեկան ծրագիր

դասարան՝ VII ա

դասղեկ՝ Իսայիրյան Մերի

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ(դասարանի ընդհանուր բնութագիրը)

VII ա դասարանը տարին սկսել է 29 աշակերտով՝ 16 տղա, 13 աղջիկ: Դասարանում ձևավորված է մի փոքրիկ, ազնիվ, կարգապահ ու կազմակերպված երեխաների խումբ: Գրեթե բոլորն էլ աշխատասեր ու ջանասեր են, ումանք հանդես են ընկնում ավելի ակտիվությամբ:

Դասարանում գերազանց է սովորում 5 աշակերտ, որոնից երկուսը տղաներ են, երեքը՝ աղջիկներ: Հարվածային է սովորում 4 աշակերտ: Ուսման մեջ առաջավորները հոգատարությամբ են օգնում դժվարացողներին: Դասարանում տիրում է առողջ մթնոլորտ, չկա լարվածություն, կաշկանդվածություն, ամեն ինչ հիմնված է փոխադարձ հարգանքի և սիրո վրա: Այստեղ յուրաքանչյուրը ազատ կարողանում է արտահայտել սեփական տեսակետը՝ չմոռանալով աշակերտական կարգուկանոնի մասին:

2. Ուսումնա-դաստիարակչական նախատեսվող աշխատանքները ուստարվա ընթացքում

1. Դասարանի ավագի ընտրություն:
2. Դասարանի ակտիվի ընտրություն (աշակերտներ, որոնք կազմակերպում են դպրոցում իրենց հանձնարարված առաջադրանքները և լուծում են դասարանում եղած խնդիրները):
3. Դասարանական աշխատանքի համակարգում:
4. Հերթապահության սահմանում, դասարանի մաքրության ապահովում:
5. Վերահսկողություն աշակերտական հագուստի նկատմամբ, զրույց ծնողների և աշակերտների հետ:
6. Նախապատրաստել և կազմակերպել աշակերտների մասնակցությունը դպրոցական գործընթացին:
7. Վերահսկել տարբեր աշակերտների մասնակցությունը աշակերտական խորհրդին և այլ խմբակներին:
8. Ձևավորել աշակերտների, ուսուցիչների և ծնողների միջև ներդաշնակ փոխհարաբերություններ:
9. Ձևավորել և կատարելագործել աշակերտների ինչպես ստեղծագործական, այնպես էլ սոցիալական ունակությունների զարգացումը (լսելու, դիտարկելու, խմբային քննարկելու):
10. Ուշադրություն դարձնել սովորողների ճանաչողական ակտիվության բարձրացմանը:
11. Այցելություն մշակութային, պատմական, ուսումնա-դաստիարակչական մի շարք ուսումնական հաստատություններ:

3. ՀԱՅԵՑԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Դպրոցը երեխաների համար ոչ միայն գիտելիք ստանալու հաստատություն է, այլ հոգևոր դաստիարակության կենտրոն, ինչն անվիճելիորեն ընդունում են բոլորը:

Հայեցի դաստիարակությունը ձևավորում է հայ մարդուն, ուստի առաջին հերթին այն պետք է իրականացնել լիարժեք կրթությամբ:

3.1 Հոգևոր դաստիարակություն

Հոգևոր զարգացման ընթացքը պայմանավորված է մի շարք գործոններով՝ ընտանիք, փողոց, շրջապատող հասարակություն և, իհարկե, դաստիարակության մեթոդի ընտրություն: Հենց այդ մեթոդով էլ առաջնորդվելով՝ դպրոցի և դասղեկի առաքելությունը այսօր երեխայի մեջ մարդու և շրջապատի հանդեպ սեր ու հարգանք ձևավորելն է:

Դասղեկի և մայրենիի ժամերին առանձին գրույցների միջոցով պետք է սովորեցնել գնահատել ազնվությունը, բարությունը, լինել արի, հանդուրժող, աշխատանքում՝ պարտաճանաչ:

3.2 Գեղագիտական դաստիարակություն

Երեխաների գեղագիտական դաստիարակությունը նպաստում են հետաքրքիր և ճանաչողական դասերը, ինչպես նաև տարաբնույթ էքսկուրսիաները: Անհրաժեշտ է էքսկուրսիաների ժամանակ սովորեցնել դիտել շրջապատի բոլոր երևույթները, եզրահանգումներ անել, բանավիճել:

Գեղագիտական դաստիարակությանը շատ նպաստում է նաև գրական հերոսների կերպարային համակարգի վերլուծությունները, նախագծային տարբեր աշխատանքները:

3.3 Ռազմա-հայրենասիրական դաստիարակություն

Պետության զարգացման համար աճող սերնդի ռազմա-հայրենասիրական դաստիարակության նկատմամբ հոգատարությունը գրավում է առաջնային տեղ, քանի որ այն նպաստում է նաև մեր երկրի պաշտպանությանը:

Շատ կարևոր է երեխաների հետ անցկացնել առանձին գրույցներ, դասղեկական ժամեր, միջոցառումներ հետևյալ թեմաներով «Խոնարհման դասեր՝ նվիրված 44 օրյա պատերազմին», «Պատիվ ունեմ լինելու Ա. Միկոյանի հետևորդը», «Հայրենիքի պաշտպանները երեկ, այսօր և վաղը», «Ուժի, փառքի և անմահության մասին»: Վկայակոչելով և մատաղ սերնդին մատնացույց անելով անցյալի հերոսներին՝ արթնացնել հայրենասիրություն յուրաքանչյուր երեխայի մեջ:

3.4 Ֆիզիկական դաստիարակություն

Ֆիզիկական դաստիարակությունը անձնավորության համակողմանի և ներդաշնակ զարգացման կարևոր բաղադրիչ է: Այն շատ կարևոր է երեխայի առողջության պահպանման, օրգանիզմի կոփման, ճիշտ կեցվածքի ձևավորման, հարթաթաթայության կանխման համար:

Խրախուսվում է երեխայի մասնակցությունը նման խմբակների, որովհետև այն բացի առողջությունը երեխային նաև տալիս է ճարպկության, արագաշարժության,

դիմացկունություն, ուժի զարգացման և կատարելագործման հմտություններ, ինչպես նաև քայլքի, վազքի, ցատկի, սողանցելու, մագլցելու հմտություններ:

Երեխային պետք է սովորեցնել ճիշտ օգտագործել մարմինը, ճիշտ սնվել, ժամանակին քնել:

3.5 Աշխատանքային դաստիարակություն

Շատ կարևոր է երեխայի մեջ իր սեփական պարտականությունների նկատմամբ պատասխանատվություն և դրական վերաբերմունք սերմանելը:

Դասողեկը պետք է խոսի երեխաների հետ իրենց պարտականությունների մասին:

Նախ, սովորելը ևս աշխատանք է, իսկ լավ սովորելը պահանջում է առավել աշխատասիրություն և գործադրվող ջանքեր՝ նպատակին հասնելու համար: Բացի այդ, երեխան պետք է հասկանա և գնահատի, որ այն ինչն ինքն ուտում է, հագնում, իր համար գնված դասագրքերը, ուսումնական նյութերը, տեխնիկայի և հաղորդակցման միջոցները ստեղծվում են իրենց ծնողների աշխատանքի արդյունքում:

Հետևաբար, աշխատանքային դաստիարակությունը, կրթության բաղադրամաս լինելով, ևս օգնում է անհատի ներդաշնակ և բազմակողմանի ձևավորմանը, ստեղծագործական կարողությունների զարգացմանը:

3.6 Բնապահպանական դաստիարակություն

Դպրոցականների շրջանում բնապահպանական կրթության նպատակն է զարգացնել պատասխանատու վերաբերմունք շրջակա միջավայրի նկատմամբ, որի կառուցվածքի հիմքը բնապահպանական գիտակցության զարգացումն է: Երեխաները պետք է կարողանան տեսնել, գնահատել, կանխել իրենց շրջապատում տեղի ունեցող բնապահպանական խախտումները, այդ հմտությունները փոխանցել իրենց ընտանիքի անդամներին և ընկերներին:

Բնապահպանական դաստիարակությունը սկսվում է հենց սեփական դասարանը մաքուր պահելուց, դասարանի աղբը ժամանակին և տեսակավորված թափելուց, ծաղիկները ջրելուց, դպրոցի բակի ծառերը և ծաղիկները չփչացնելուց:

4. Դպրոց-ընտանիք կապը

Երեխայի հետազոտման, նրա լավագույն որակների և հատկությունների բացահայտման ու զարգացման հարցերում շատ է կարևորվում դպրոցի և ընտանիքի փոխներգործությունը: Այդպիսի փոխհարաբերությունների հիմքում միմյանց նկատմամբ վստահություն, փոխադարձ հարգանքի, փոխօգնության և օժանդակության, համբերատարության սկզբունքներն են: Այս կապը շատ կարևոր ազդեցություն է ունենում երեխայի վարքի և կրթության վրա:

Կարևորվում է նաև դասողեկի կողմից երեխայի ընտանեկան վիճակի ուսումնասիրությունը, քանի որ այն խորապես անդրադառնում է երեխայի զարգացման և հոգեվիճակի վրա:

Ուսումնական շաբաթներ	Ուսումնա-դաստիարակչական աշխատանքների բովանդակությունը	կատարման ժամկետը	Կատարողներ
1-ին շաբաթ	Ծնողական ժողով: Ծնողխորհրդի կազմի ընտրություն:	01.09-08.09	դասուցի, աշակերտներ, ծնողներ
2-րդ շաբաթ	Աշակերտների հաշվառում, դասագրքերի բաշխում, դասարանի մաքրության ապահովում:	11.09-15.09	դասուցի, աշակերտներ
3-րդ շաբաթ	Հերթապահության սահմանում, դասուցիի ժամի ընտրություն:	18.09-22.09	դասուցի, ծնողներ, փոխսնօրեններ
4-րդ շաբաթ	Կարգապահական հարցերի կարգավորում:	25.09-29.09	դասուցի, ծնողներ, աշակերտներ
5-րդ շաբաթ	«Ուսուցիչներ, խոնարհվում ենք Ձեր առջև» դաս-գրույց: Ուսուցչի դերը մեր կյանքում:	02.10-06.10	դասուցի, աշակերտներ, ուսուցիչներ
6-րդ շաբաթ	Զրույց. «Դպրոց՝ ուսման դարբնոց» թեմայով:	09.10-13.10	դասուցի, աշակերտներ
7-րդ շաբաթ	Ի՞նչ է նշանակում նախագիծ: Ինչպե՞ս գրել նախագծային աշխատանք:	16.10-20.10	դասուցի, աշակերտներ, ուսուցիչներ
8-րդ շաբաթ	Նախագծային աշխատանքների պատրաստում, քննարկում: Նախագծային աշխատանքների հոլովակների դիտում:	30.10.03.11	դասուցի, աշակերտներ, ուսուցիչներ
9-րդ շաբաթ	Հիշակատի և հավերժության վերհիշում: Այցելություն Ե. Չարենցի տուն-թանգարան:	06.11-10.11	դասուցի, աշակերտներ, ծնողներ
10-րդ շաբաթ	Դասալսումներ տարբեր առարկաներից:	13.11-17.11	դասուցի, աշակերտներ, ուսուցիչներ
11-րդ շաբաթ	Դասալսումների ժամանակ նկատած թերությունների քննարկումներ, շտկումներ:	20.11-24.11	դասուցի, աշակերտներ, ծնողներ
12-րդ շաբաթ	Զրույց «Ի՞նչ է ընկերությունը և բարեկամությունը»	27.11-01.12	դասուցի, աշակերտներ
13-րդ շաբաթ	Զգուշություն սոց. կայքերից:	04.12-08.12	դասուցի, աշակերտներ
14-րդ շաբաթ	Բարև՝ 2024: Դասարանի ամանորյա	11.12-15.12	դասուցի, աշակերտներ

	ձևավորում:		երտներ, ծնողներ
15-րդ շաբաթ	1-ին կիսամյակի արդյունքների քննարկում, ամփոփում:	18.12-22.12	դասուցաներ, աշակերտներ, ծնողներ, ուսուցիչներ

Երկրորդ կիսամյակ

Ուսումնական շաբաթներ	Ուսումնա- դաստիարակչակա ն աշխատանքների բովանդակությունը	կատարման ժամկետը	Կատարողներ
16-րդ շաբաթ	Զրույց «Մեր երկրի հերոսական անցյալը»:	08.01-12.01	դաստեղ, աշակ երտներ
17-րդ շաբաթ	Մեր, կյանք, բարություն, համերաշխությու ն , առանց դրանց կյանքն անիմաստ է:	15.01-19.01	դաստեղ, աշակերտներ
18-րդ շաբաթ	Հայոց բանակին նվիրված փոքրիկ ցերեկույթ:	22.01-26.01	դաստեղ, աշակ երտներ, ծնողներ
19-րդ շաբաթ	Գրքի դերը իմ կյանքում. քննար կում	29.01-02.02	դաստեղ, աշակ երտներ, ուսուցիչներ
20-րդ շաբաթ	Զրույց «Ի՞նչ է պատասխանատ վության զգացումը»:	05.02-09.02	դաստեղ, աշակ երտներ
21-րդ շաբաթ	Թումանյան. գիրք նվիրելու օր	12.02-16.02	դաստեղ, աշակ երտներ
22-րդ շաբաթ	Մայրենիի օր: «Գրքի գողը գող չէ» քննարկում:	19.02-23.02	դաստեղ, աշակ երտներ, ուսու ցիչներ
23-րդ շաբաթ	Ազգային սովորություններ: Եկեղեցական տոներ:	26.02-01.03	դաստեղ, ուսու ցիչներ, աշակե րտներ
24-րդ շաբաթ	Մայրություն և գեղեցկություն:	04.03-07.03	դաստեղ, աշակ երտներ
25-րդ շաբաթ	Աշխատանք ազնվացնում, գեղեցկացնում է:	11.03-15.03	դաստեղ, աշակ երտներ
26-րդ շաբաթ	«Առողջ մարմնում առողջ ոգի»: Առողջ		Դաստեղ, աշակերտներ, ֆիզկուլտուր

	ապրելակերպի կանոնները և անհրաժեշտությունը:	18.03.22.03	այի ուսուցչուհի
27-րդ շաբաթ	Գեղագիտական մշակույթի զարգացում: Այցելություն կինոատրոն:	01.04-05.04	դասուցչուհի, աշակերտներ, ծնողներ
28-րդ շաբաթ	Հաղորդակցման ժամ «Ո՞վ եմ ես»: Բանավեճ-քննարկում:	08.04-12.04	դասուցչուհի, աշակերտներ
29-րդ շաբաթ	Զրույց «Ողջ աշխարհը խաղաղություն է ուզում»:	15.04-19.04	դասուցչուհի, աշակերտներ, ուսուցիչներ
30-րդ շաբաթ	Հայոց ցեղասպանություն: Զոհերի հիշատակում:	22.04-26.04	դասուցչուհի, աշակերտներ, պատմության ուսուցչուհի
31-րդ շաբաթ	Ազգային տոներ և ավանդություններ:	29.04-03.05	դասուցչուհի, աշակերտներ
32-րդ շաբաթ	«Իմ սիրած երգերը»: Աշակերտների մոտ ձևավորել գեղագիտական դաստիարակություն:	06.05-10.05	դասուցչուհի, աշակերտներ, երաժշտության ուսուցիչ
33-րդ շաբաթ	Կիսամյակային և տարեկան արդյունքների ամփոփում:	13.05-17.05	դասուցչուհի, ուսուցիչներ
34-րդ շաբաթ	Ամառային առաջադրանքների հանձնարարում:	20.05-24.05	դասուցչուհի, աշակերտներ

1				
2			Բոնցքամարտ	
3				
4		«Շող» ցերեկային կենտրոն		
5		կիթառ		
6				
7	ծրագրավորման դասընթաց			
8				
9			ֆուտբոլ	
10				
11			ձյուդո	
12				
13				
14				
15	կիրակնօրյա դպրոց	պար, դաշնամուր, վոկալ		
16			ձյուդո	
17		պար		
18				
19				
20			ֆուտբոլ	
21		նկարչության խմբակ		
22	ծրագրավորման դասընթաց			
23		նկարչության խմբակ		
24				
25			ձյուդո	
26			պար	
27			պար	
28				
29				
30				
31				
32				
33				
34				
35				

ԴԱՍՂԵՎԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԹԵՄԱՏԻԿԱՆ

անցկացման օրը	դասղեկի անցկացրած միջոցառման(դասախոսություն, զրույցներ, դիտողական արշավներ, էքսկուրսիաներ և այլն) բովանդակությունը	Ծանոթություն
08.09.23	Զրույց նվիրված գիտելիքի օրվան: «Գիտելիքը ուժ է»:	
15.09.23	Ինչպե՞ս եմ անցկացրել ամառային արձակուրդները:	
22.09.23	«Մարդ, ում մասին կուզեի ամեն ինչ իմանալ»- քննարկում կլոր սեղանի շուրջ:	
29.09.23	Խոնարհման դասեր՝ նվիրված 44 օրյա պատերազմին:	
06.10.23	Ազնիվ ու անկեղծ հարաբերությունները մեր դասարանում:	
13.10.23	«Ուսուցիչ, որին ես շնորհակալ եմ». գաղտնի նամակ	
20.10.23	Ժամանց. վտանգներ և առավելություններ:	
03.11.23	Գրքերի աշխարհում:	
10.11.23	Մեդիագրագիտության շաբաթ Հայաստանում:	
17.11.23	Ծխախոտը և դրա բացասական հետևանքները. բանավեճ-քննարկում:	
24.11.23	Էթիկայի և վարվեցողության կանոններ. դասղեկի բաց դաս:	
01.12.23	«Ես հարգում եմ դիմացինի կարծիքը» քննարկում:	
08.12.23	Ինչպե՞ս պաշտպանվել բնական աղետներից:	
15.12.23	Պատիվ ունեմ լինելու Ա. Միկոյանի հետևորդը:	
22.12.23	Իմ ձեռքբերումները և թերացումները այս կիսամյակում:	
12.01.24	«Ի՞նչ կցանկանայի փոխել այս տարի»-քննարկում:	
19.01.24	Ի՞նչն է ինձ համար արժեքավոր:	
26.01.24	Հայրենիքի պաշտպանները երեկ, այսօր և վաղը:	
02.02.24	Ինչպե՞ս վարվել աղբի հետ:	
09.02.24	Առողջ ապրելակերպի սկզբունքները:	
16.02.24	Բարեկամությունը սկսվում է ժպիտից:	
23.02.24	«Մայրենիի օր»: Լեզուն մեր զենքն է, մեր ամուր պատմությունը:	
01.03.24	Գիրքը մարդու լավագույն ընկերն է:	
08.03.24	Լինե՛նք առավել բարեկիրթ:	
15.03.24	Գարնանաբույր տոներ: Դրանց ծագումն ու խորհուրդը:	
22.03.24	«Մայրն անգին է» թեմայով զրույց:	
05.04.24	Ֆիլմի ցուցադրում բարության, ընկերության մասին:	
12.04.24	Արդյո՞ք գիտեմ իմ իրավունքներն ու պարտականությունները:	
19.04.24	Ինչպե՞ս նպաստել մանկատների փակմանը:	
26.04.24	«Փոքրիկ պատմություններ անհատի և հասարակության խնդիրների մասին» բանավեճ:	
03.05.24	«Նախապաշարումների ոստան»: Ներկայացնել, թե	

	ինչպես է իրեն զգում նախապաշարմունքի և կարծրատիպերի գոհ դարձած մարդը:	
10.05.24	Ուժի, փառքի և անմահության մասին:	
17.05.24	Ի՞նչ հասկացա այս տարվա մեջ: Ի՞նչ կփոխեմ հաջորդ տարի:	
24.05.24	Զրույց տարվա վերջին: Նամակ դպրոցին և դասղեկին:	

ԴԱՍՂԵԿԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԴԺՎԱՐ ԴԱՍՏԻԱՐԱԿՎՈՂ, ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԲԱՐԵՆՊԱՍՏ
ՎԻՃԱԿՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ԾՆՈՂԱԶՈՒԻԿ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ՀԵՏ

